«26» սեպտեմբերի, 2013 թ.

N: Ս-ԺԳ-01

ՀՀ Կրթության և գիտության նախարար
Արմեն Աշոտյանին,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Կարեն Անդրեասյանին,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Աշոտյան,

պարոն Անդրեասյան,

պարոն Հայրապետյան,

Տեղեկատվության ստացման Ձեր գրասենյակների հարցմանն ի պատասխան՝ հայտնում ենք, որ ս.թ. օգոստոսի 26-ին «Հանուն ժողովրդավարության» ընկերակցության գործադիր տնօրեն Հովհաննես Ասրյանի կողմից ստացված նամակին (կցվում է) պատասխան է տրվել նույն թվականի օգոստոսի 30-ին (ներկայացվում է առդիր):

Նշենք, որ պարոն Ասրյանի բոլոր նամակներին, որոնք ուղղվել են կա՛մ անձամբ մեզ, կա՛մ այլ կառույցների, ինչպես ձեր դեպքում, տրվել է հարգալից և մանրամասն պատասխան:

2013-2014 ուսումնական տարվա կրթաթոշակին արժանացած ուսանողների ցանկն արդեն երկու ամիս է՝ հրապարակված է «Լույս» հիմնադրամի կայքում՝ http://www.luys.am/am/content/view/lnn-news72: Ինչպես միշտ, այդ ցանկը հրապարակվում է մինչև օգոստոսի կեսերը:

Հովհաննես Ասրյանի հայցած տեղեկատվությունը տրամադրվել է իր որդուն՝ 27-ամյա Արամ Ասրյանին, ով դիմել էր «Լույս» հիմնադրամի կրթաթոշակին և դիմորդների առաջին տասնյակում չէր: Վերջինիս կողմից որևէ բողոք չկար. դա է հավաստում իր վերջին նամակը, որտեղ նա շնորհակալություն է հայտնում «Լույսին» և նախատեսում մեզ դիմել արդեն մյուս տարի (կցվում է):

Նրա հայրիկի և Մոսկվայում գտնվող մորաքրոջ նամակներից ու զանգերից հետո Արամ Ասրյանի հետ սկայպ հանդիպման առաջարկ է ուղարկվել՝ պարզելու իր մոտ առաջացած

հարցերը, որին հետևել են «Լույսի» ևս մի քանի նամակներ, այդ թվում՝ անձամբ ինձնից, սակայն արձագանք չի ստացվել:

«Լույս» հիմնադրամը կրթաթոշակի հայտեր է ընդունում ապրիլի 1-ից հուլիսի 15-ը: Իսկ համալսարանը կարող է ուսանողներ ընդունել տարբեր ամսաթվերի՝ նախ և առաջ ընդունելով նախորդ տարվա ընդունված և ուսումը հետաձգած դիմորդներին, իսկ հետո աստիճանաբար՝ ամիսների ընթացքում՝ ըստ դիմումների ստացման փուլերի: Մեր բոլոր կրթաթոշակառուների նամակները Լոնդոնի համալսարանական քոլեջից (UCL) նույն գրասենյակից են ստացվել և ստորագրված են նույն մարդու՝ տնօրենի կողմից՝ պարոն Թիմ Փերրի:

Պարոն Ասրյանի մեղադրանքը «Լույսին» այն է, որ ինքը չի հավատում, թե կարելի է ընդունելության վերջնական հրավեր ստանալ ավելի շուտ, քան ստացել է իր որդին: Եթե մեր պատասխանը չի բավարարում, ապա ամենահստակ աղբյուրը Լոնդոնի համալսարանական քոլեջն է, և մենք ձեր աշխատանքը հեշտացնելու համար տրամադրում ենք կոնտակտային բոլոր տվյալները ու «Լույսի» 10 կրթաթոշակառուների անուններն ու ընդունելության ամսաթվերը (տրվում է ստորև):

Mr. Tim Perry, BA
Director of Registry and Academic Services
University College London, Gower Street, London WC1E 6 BT
Tell: +44 (0)20 7679 7742/7381/2006 Fax: +44 (0)20 7691 3112
admissions@ucl.ac.uk
www.ucl.ac.uk/prospective-students

Նշենք, որ UCL-ի կոնտակտային տվյալները միշտ հասանելի են եղել պարոն Ասրյանին:

Անպատասխանատու մոտեցում է, երբ առաջին աղբյուրից հեշտ ստուգվող տեղեկատվությունը չի ճշտվում. փոխանակ հենց UCL-ից ճշտելու ընդունելության ժամկետները, հեղինակը շարունակ նույնաբովանդակ նամակներ է հղում «Լույսին», որոնց պատասխանները իրեն չեն բավարարում: Արդյունքում նա անհիմն մեղադրանք է տարածվում, որը փորձում է վնասել մեր կառույցի հեղինակությունը: Հարց է առաջանում, թե որն է նպատակը՝ ստանալ տեղեկատվություն, թե վնասել մեր հիմնադրամին:

Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ 27-ամյա Արամ Ասրյանի հայտը «Լույս» հիմնադրամի կրթաթոշակին ստացվել է UCL-ի 10 տեղերի լրացումից 17 օր անց:

Ելնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի պահանջներից՝ դիմորդների ներկայացրած փաստաթղթերի տրամադրումն անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի խախտում է: Ուստի պահանջվող փաստաթղթերի պատճենը ներկայացնելու փոխարեն ստորև տրվում են «Լույսի» կրթաթոշակառուների անուն-ազգանունը և Լոնդոնի համալսարանական քոլեջից ստացված վերջնական հրավերի ամսաթիվը: